ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-26/6» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 5 դեկտեմբերի 2025թ.

Ժամը 14:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Տիրան Խաչատրյան

Հանձնաժողովի անդամներ՝ Հայկ Հովհաննիսյան, Տաթևիկ Պալոյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Նելլի Աբովյան

1.Էլեկտրոնային աճուրդի Մասնակցի հայտը վերագնահատելու մասին

1.1 Ընդունել ի գիտություն, որ «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-26/6» ծածկագրով հայտարարված էլեկտրոնային աճուրդի հայտերի գնահատման ժամանակ՝ 20.11.2025թ.-ի նիստում, «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-26/6» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում էր կայացրել՝ «Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի հայտը 6-րդ չափաբաժնի մասով գնահատել անբավարար և մերժել:

1.2 ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի 2-րդ և 8-րդ ենթակետերի համաձայն, եթե պայմանագրի գինը կայուն է, ապա մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով: Մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Հետևաբար, մասնակցի հայտի գնահատման ժամանակ, գնահատող հանձնաժողովը հիմք է ընդունում ներկայացված գինը և վերջինիս վերապահված չէ ինչպես գնային առաջարկի հիմնավորվածության գնահատման, այնպես էլ «մեկ 0 պակաս» գնային առաջարկ ներկայացված լինելու արդյունքում ընտրված մասնակցի կողմից ներկայացված գրության հիման վրա հայտը մերժելու լիազորություն:

1.3 Հաշվի առնելով վերը նշվածը՝ «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-26/6» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, որոշում է կայացնում շտկել 20.11.2025թ.-ի նիստի N2 արձանագրության 3.2 կետով կայացրած որոշումը, և «Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի հայտը 6-րդ չափաբաժնի մասով գնահատել բավարար՝ «Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ին 6-րդ չափաբաժնի մասով ճանաչելով ընտրված՝ հաղթող, մասնակից:

1.4 «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-26/6» ծածկագրով գնման ընթացակարգի 6-րդ չափաբաժնի մասով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության շտկված տարբերակը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

1.5 «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-26/6» ծածկագրով գնման ընթացակարգի 6-րդ չափաբաժնի մասով, ընտրված՝ հաղթող, մասնակցի՝ «Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի, հետ «Գնումների մասին» ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն՝ կնքել պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ **Տ. Խաչատրյան**

Քարտուղար _____ **Ն. Աբովյան**

Անդամներ՝ _____ **Հ. Հովհաննիսյան**

_____ **Տ. Պալոյան**